

տրուէր, այլ ընծայեալներ և ընծայացուններ առ ոսոս այս կամ այն վարդապետի մը կը մնային փոքրաւորի դերին մէջ, եկեղեցական սպասարկութեանց կը վարժուէին, և կարևորագոյն սեպուած ուսմունքներու կը հետեւէին: Վերջին ժԹ. դարու առաջին քառորդին մէջ կ'սկսին ժառ. Վարժարան կազմելու կամ հիմնելու մտադրութիւնները. և իբր նախաձեռնարկներ պիտի յիշուին Պօղոս Աղբիանուպոլսեցի կառավարիչը և Զաքարիա Կոփեցի ու Կիրակոս Երուսաղեմացի պատրիարքները: Զաքարիա ամենէն աւելի զործին հետամուտ եղած է, Կ. Պոլիս և Վենետիկ տեսածներուն ազդեցութեամբ. ուստի իր պատրիարքութեան երկրորդ տարւոյն մէջ 1843ին առաջին վարժարանը բացած է Ռէմլէի վանքին մէջ, զոր տարիուկէս ետքը, 1845ին փոխադրած է Երուսաղէմի մէջ մասնաւոր տուն մը: Կիրակոս որ 1847ին յաջորդեց, վարժարանին աւելի զարկ աւուլու համար փոխադրած է վանքին մէջ, նոյն այն սրահը զոր Շղթայակիր շինած էր Կոյտտին համար: Այս տեղը բաւարար չէր կրնար ըսուիլ, ուստի Կիրակոս ուղեց յատուկ շէնք մը կառուցանել, բայց չյաջողեցաւ: Յովհաննէս պատրիարք, պատրիարքարանի շէնքը աւարտելէ յետոյ, շինեց նաև Զամ թաղը (այդ անունը կ'առնու մօտի մայրի ծառերէն) զոր հիմնած էր Կիրակոս, իբրև ուխտաւորաց թաղ: Յովհաննէս շուտով ձեռնարկեց վարժարան մ'ալ շինել, որ է այժմեան ձեւաւրանը. և որ լրացաւ 1857ին, սակայն զանազան պարագաներ և իր վերահաս մահը 1860ին և Աթոռոյ պարագութիւնը մինչեւ 1865, չներեցին վարժարանի զործը կարգադրել և Նսայի պատրիարքի մնաց հին նպատակը գլուխ հանել: Վարժարանը բացաւ ձեմարանին մէջ, Զամ թաղն ալ անոր յարակցելով, զիչերօթիկ վարժարանի մը պէտք եղած բաժինները լրացնելով:

Ժառ. Վարժարանը կը գտնուի նորաշէն Մատենադարանին աջ կողմը, պարտէզներով շրջապատուած, օդատուն և գեղեցիկ վայր մը: Վարժարանի շէնքը կանոնաւոր քառանկիւն մը կը կազմէ. 51 մէթր երկայն և 29 լայն թեւերով, որ կու տայ 1480 քառակուսի մէթր տարածութիւն: Շէնքը երկյարկանի է և մէջտեղը բաց: Գետնայարկին վրայ դէմ դիմաց իննական չափաւոր սենեակներ կան, արեւելեան և արևմտեան թեւերուն վրայ. այդ սենեակները այժմ յատկացուած են Ընծայարանի աշակերտ-